ՆԱԽԱԳԻԾ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N 041-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04-Ը ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 04-ը ապրիլի 2025 թվականի թիվ 4 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 04-ըապրիլի 2025 թվականի թիվ 4 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2.Արենի համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

3.Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխում կատարելու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արթուր Սողոմոնի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 03 մարտի 2025 թվականի թիվ 027-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը ուժը կորցրած ճանաչելու մասին:

6. Արենի համայնքում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Համալիր սոցիալ-հոգեբանական աջակցություն հաշմանդամություն և զարգացման խնդիր ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին» ծրագրին ներդրում կատարելու համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյանը